- Շրջակա միջավայրի, ջրի և սննդամթերքի վիճակի մշտական վերահսկողություն
- Կառավարման մարմինների և բնակչության իրազեկման ապահովում
- Քիմիական, ճառագայթային և մանրէաբանական ապահովում
- Անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացում
- Հասարակական կարգի պահպանություն և կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանման ուժեղացում
- Նյութատեխնիկական պաշարների, տրանսպորտային և այլ միջոցների նպատակային օգտագործում
- Փրկարարական աշխատանքների կազմակերպման ու իրականացման համար կապի հանրապետական, գերատեսչական և տեղական ցանցերի առաջնահերթ օգտագործում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

✓ Կարևոր է իմանալ

Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ փրկարարական աշխատանքների կատարման և բնակչությանը մասնագիտացված օգնություն ցույց տալու նպատակով ստեղծվում են փրկարար ուժեր, որոնք **մշտական պատրաստության վիճակում են և գործում են կենտրոնացված կառավարման սկզբունքով:**

Պարբերաբար՝ ապահովում ենք մեր ապագան

112 rescue.mia.gov.am

Քաղաքացիական պաշտպանության համաշխարհային օր՝ մարտի 1:

Խաղաղություն ակավում է պարբերաբվածությունից

Ի՞ՆՉ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքացիական պաշտպանությունը պետության կողմից իրականացվող միջոցների համակարգ է, որն ուղղված է բնակչության և նյութական արժեքների պաշտպանությանը կամ պաշտպանության նախապատրաստմանը ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ՀՀ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

- Տարհանում
- Պատսպարում
- Անհատական պաշտպանության միջոցներով ապահովում

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԼԻՆՈՒՄ ԵՆ՝

- Նախապատրաստական
- Հիմնական

ՔՊ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Քաղաքացիական պաշտպանության ուժերի ձևավորում, պատրաստում և մշտական պատրաստվածության ապահովում
- Կարևոր օբյեկտների անվտանգ գործունեության ապահովում և դրանց ճիշտ տեղաբաշխում
- Շենքերի, շինությունների, ճանապարհների և այլ կառույցների անվտանգության ապահովում
- Կառավարման, կապի ու ազդարարման համակարգերի ստեղծում և դրանց բնականոն գործունեության ապահովում
- Պետական, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստում և բնակչության ուսուցում
- Ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակների հսկողության համակարգի ստեղծում և գործունեության ապահովում
- Կառավարման մարմինների և բնակչության իրազեկման ապահովման համակարգի հիմնում
- Պաշտպանական կառույցների շինարարություն և պահպանում
- Անհատական պաշտպանության միջոցների և այլ գույքի անհրաժեշտ պաշարների կուտակում և պահպանում
- Սննդամթերքի, բժշկական ու նյութատեխնիկական անհրաժեշտ պաշարների ստեղծում և պահպանում
- Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակում:

ՔՊ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Կառավարման մարմինների և հասարակության ազդարարում
- Տարհանումը և բնակչության տեղաբաշխում
- Պատսպարում
- Անհատական պաշտպանության միջոցներով բնակչության ապահովում
- Քողարկում
- Փրկարարական աշխատանքների իրականացում
- Բժշկական ապահովում
- Հակահրդեհային ապահովում
- Վտանգավոր տարածքների բացահայտում, վնասազերծում և վարակազերծում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական միջոցներից
- Բնակչության կենսագործունեության ապահովում
- Զոհվածների հաշվառում և հուղարկավորում